



ՏԵՂԵԿԱՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	2
3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	6
3.1 Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման	6
3.2 Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման	9
3.3 Ծախսերը՝ ըստ ծրագրերի	11
4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ.....	12
5. ԱՄՓՈՓՈՒՄ	13

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երևան քաղաքի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը արտացոլում է քաղաքային իշխանությունների կողմից տարվա ընթացքում իրենց առջև դրված խնդիրների լուծման առաջընթացը և արդյունավետությունը: 2022թ. բյուջեն կատարողականի տեսանկյունից որոշակիորեն առաջընթաց է ապրել նախորդ տարվա համեմատ, սակայն բյուջեի հնարավորություններն էական աճ չեն գրանցել, իսկ մի շարք խրոնիկ խնդիրներ դեռևս պահպանվել են:

2022թ. ընթացքում ՀՀ տնտեսության՝ ընդհանուր առմամբ դրական զարգացումները Երևան քաղաքի բյուջեի վրա կարծես թե ազդեցություն չեն ունեցել: Ավելին, բյուջեի եկամուտների հաստատված պլանը տարվա ընթացքում վերանայվել է դեպի ներքև շուրջ 7.5%-ով, սակայն, նույնիսկ այդ ցուցանիշը թերակատարվել է: Փաստացի եկամուտները կազմել են 86.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով ընդամենը 5.5%-ով: Ծախսերը, սակայն, աճել են ավելի արագ տեմպով՝ 18%-ով և կազմել 94.8 մլրդ դրամ: Արդյունքում ձևավորվել է քաղաքային բյուջեի պակասուրդ՝ 8.6 մլրդ դրամի չափով, որը մեծամասամբ ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին:

Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները, մլրդ դրամ



Երևանի բյուջեի և՛ եկամուտները, և՛ ծախսերը շարունակել են թերակատարվել: Մասնավորապես, եկամուտների կատարողականը ճշտված պլանի համեմատ 2022թ. կազմել է 98.5%, իսկ ծախսերինը՝ 85.1%: Հատկանշական է, որ առավելապես թերակատարվել են ֆոնդային բյուջեի ծախսերը՝ շուրջ 43.1%-ով, ինչը նշանակում է,

որ Երևան քաղաքի մակարդակով նույնպես կապիտալ ծախսերի իրականացման կարողությունների խնդիրները դեռևս չեն լուծվել:

Հարկ է նշել, սակայն, որ բյուջեի կատարողականները բարելավվել են նախորդ տարվա համեմատ: Մասնավորապես, եկամուտների կատարողականը բարելավվել է 3.2 տոկոսային կետով, իսկ ծախսերինը՝ 11.8 տոկոսային կետով:


Աղյուսակ 1. Երևան քաղաքի բյուջեի ամփոփ ցուցանիշները (մլն դրամ) և դրանց կատարողականը, 2022թ

	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտներ	94.6	87.5	86.2	91.1%	98.5%
Վարչական բյուջե	93.4	86.3	84.82	90.8%	98.3%
Ֆոնդային բյուջե	6.5	4.3	1.37	20.9%	31.9%
Ծախսեր	98.8	111.4	94.8	95.9%	85.1%
Վարչական բյուջե	93.4	86.4	78.7	84.3%	91.2%
Ֆոնդային բյուջե	10.8	28.2	16.1	148.8%	56.9%
Հավելուրդ	-4.3	-24.0	-8.6	202.1%	36.0%

2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Երևանի 2022 թվականի բյուջեի եկամուտների կառուցվածքում զգալի փոփոխություններ չեն գրանցվել: Փաստացի եկամուտների 26.8%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 9.1 տոկոսային կետը՝ անշարժ գույքի հարկերի, 12.6 տոկոսային կետը՝ այլ գույքային հարկերի, 4.2 տոկոսային կետը՝ տեղական տուրքերի, իսկ 0.9 տոկոսային կետը՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերի հաշվին: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 25.6%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհներից (հիմնականում՝ պետական բյուջեից ստացվող), 47.6%-ը՝ այլ եկամուտների հաշվին, որից էական մասը՝ 33.4 տոկոսային կետը՝ համայնքի բյուջեի եկամուտներն են ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (պատվիրակված լիազորություններ):

Գծապատկեր 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտների կառուցվածքը,%



Ընդհանուր հարկային եկամուտների աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 7.9%, որի կազմում էական է եղել անշարժ գույքից գանձվող հարկերի աճը՝ շուրջ 10.3%-ով՝ պայմանավորված գույքահարկի բարձրացմամբ: Սակայն անշարժ գույքի գծով հարկերը էականորեն՝ շուրջ 14.9%-ով կամ 1.4 մլրդ դրամով թերակատարվել են, այն դեպքում, երբ նախորդ տարի այս հարկատեսակի գծով արձանագրվել էր գերակատարում: Քանի որ գույքահարկի բազան հայտնի է բյուջեի պլանավորման փուլում, հաստատված պլանից ցածր հարկերի հավաքագրումը կարող է պայմանավորված լինել վարչարարության անարդյունավետությամբ: Վերջինս սպասելի էր առանց վարչարարական բարեփոխումների գույքահարկի բեռի էական բարձրացման պարագայում՝:

«Գույքային հարկեր այլ գույքից» հոդվածով, որտեղ գրանցվում է տրանսպորտային միջոցների համար վճարվող գույքահարկը, նույնպես արձանագրվել է եկամուտների թերակատարում (շուրջ 13.0%-ի չափ): Այս դեպքում, հավանաբար, խնդիրն արդեն պլանավորման մեջ է, քանի որ տրանսպորտային միջոցների գույքահարկի հավաքագրման գործիքակազմը սովորաբար ավելի արդյունավետ է:

¹ Գույքահարկի բարեփոխումները՝ առանց շուկայական գնահատման համակարգի ներդրման, «Լոյս» հիմնադրամ, 3 հուլիսի 2020թ.:

Աղյուսակ 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտները 2022 թվականին

Եկամտատեսակները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2021թ. նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ	94.6	87.5	86.2	91.1	98.5	5.5
Հարկեր և տուրքեր	25.3	25.4	23.1	91.2	91.1	7.9
Գույքային հարկեր անշարժ գույքից	9.3	9.3	7.9	85.1	85.1	10.3
Գույքային հարկեր այլ գույքից	12.4	12.4	10.8	87.0	87.0	5.3
Տեղական տուրքեր	3.2	3.2	3.6	115.0	113.4	7.3
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	0.5	0.5	0.8	165.6	165.6	28.0
Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝	22.4	22.3	22.0	98.1	98.7	2.3
Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	1.3	0.4	0.4	28.0	100.0	49.5
Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0.7	0.7	0.6	83.0	83.0	-17.2
Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	20.0	20.8	20.7	103.2	99.2	1.9
Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	0.4	0.4	0.4	101.0	100.0	40.7
Այլ եկամուտներ	46.8	39.8	41.0	87.7	103.2	5.8
Շահաբաժիններ	0.1	0.1	0.2	286.8	286.8	128.0
Գույքի վարձակալությունից եկամուտներ	1.6	1.5	1.6	101.7	105.7	26.1
Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների	37.6	30.6	28.8	76.6	94.1	-2.8

Եկամտատեսակները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ.	Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2021թ. նկատմամբ, %
				մլրդ դրամ		
մատակարարումից և ծառայությունների մատուցումից						
Վարչական գանձումներ	6.2	6.2	6.7	107.9	107.4	4.1
Մուտքեր տույժերից, տուգանքներից	0.6	0.6	1.7	288.8	288.8	123.9
Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	-	74.2	-72.8
Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	12.6	12.6	-51.1
Այլ եկամուտներ	0.7	0.7	2.0	273.5	273.5	246.6

Երևան քաղաքի բյուջեի եկամուտների կարևոր մասը կազմող պաշտոնական դրամաշնորհների գծով ևս արձանագրվել է աճ նախորդ տարվա համեմատ՝ շուրջ 2.3%-ով: Եկամուտների այս տեսակի գծով նույնպես արձանագրվել է թերակատարում ճշտված պլանի նկատմամբ՝ շուրջ 1.3%-ով՝ բավական փոքր լինելով նախորդ տարվա 9.6% թերակատարումից: Այս հոդվածի հիմնական տարրը կառավարման այլ մակարդակներից, մասնավորապես՝ կառավարությունից ստացվող ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներն են, որոնց ծավալը կազմել է 20.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.9%-ով: Հարկ է նշել, որ պաշտոնական դրամաշնորհներում ներառվող՝ կառավարությունից ստացվող կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով գրանցվել է զգալի աճ՝ շուրջ 40.7%, և թերակատարում չի արձանագրվել: Սակայն, դրանց կշիռը դեռևս բավական փոքր է քաղաքի բյուջեի եկամուտներում:

Բյուջեի այլ եկամուտները 2022թ. կազմել են 41.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.8%-ով: Այս եկամուտների գծով արձանագրվել է թերակատարում հաստատված պլանի նկատմամբ (12.3%-ով) և գերակատարում ճշտված պլանի նկատմամբ (շուրջ 3.2%-ի չափով)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տարեսկզբի պլանը վերանայվել է դեպի ներքև: Այլ եկամուտների կազմում բարձր աճեր են գրանցվել շահաբաժինների (շուրջ 2.3 անգամ), տույժերից և տուգանքներից մուտքերի (շուրջ 2.2 անգամ) և այլ եկամուտների գծով (շուրջ 3.5 անգամ): Վերջիններս, սակայն, բավական փոքր կշիռ ունեն եկամուտների կառուցվածքում:

Մինչդեռ առավել մեծ կշիռ ունեցող եկամտատեսակի՝ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտների գծով (որն իրենից ներկայացնում է պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները) արձանագրվել է մուտքերի 2.8%-ով նվազում, իսկ փաստացի եկամուտների կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 94.1%:

3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ


2022թ. Երևան քաղաքի բյուջեի ընդհանուր ծախսերը կազմել են 94.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել է 18%-ով: Սակայն, աճի հետ մեկտեղ արձանագրվել է նաև ծախսերի էական թերակատարում և՛ հաստատված, և՛ ճշտված պլանի նկատմամբ՝ համապատասխանաբար 4.1% և 14.9%-ով: Ծախսերի վերաբերյալ առավել մանրամասն վերլուծությունը ներկայացվում է հաջորդ ենթաբաժիններում՝ ըստ ծախսերի դասակարգումների:

3.1 Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Ըստ տնտեսագիտական դասակարգման՝ Երևան քաղաքի բյուջեի ծախսային հոդվածներն են՝ *ընթացիկ ծախսերը, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը*: Ծախսերի նմանատիպ դասակարգումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ծախսերի տնտեսական ազդեցությունների վերաբերյալ: Որպես կանոն, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (որոնք հաճախ անվանվում են նաև կապիտալ ծախսեր) ունենում են առավել երկարաժամկետ ազդեցություններ, քանի որ ուղղված են քաղաքի ենթակառուցվածքների և այլ կապիտալ շինությունների ավելացմանը և բարելավմանը:

2022թ. բյուջեի ծախսերի կառուցվածքում էական դեր են ունեցել ընթացիկ ծախսերը, որոնց կշիռը, սակայն, զգալիորեն նվազել է (նախորդ տարվա համեմատ՝ 10.6 տոկոսային կետով)՝ կազմելով 83.1%: Ընթացիկ ծախսերի հաստատված պլանը 2022թ. համար կազմում է 88.1 մլրդ դրամ, որը տարվա ընթացքում ճշտվել է դեպի ներքև՝ հասնելով 83.2 մլրդ դրամի: Փաստացի ցուցանիշը կազմել է 78.7 մլրդ դրամ՝ ճշտված պլանի համեմատ թերակատարվելով 5.4%-ով, իսկ հաստատված պլանի համեմատ՝ 10.7%-ով:

Գծապատկեր 3. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ տնտեսագիտական դասակարգմամբ (մլրդ դրամ), 2022թ.



Ընթացիկ ծախսերի աճը հիմնականում ապահովվել է սուբսիդիաների և աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի համապատասխանաբար 5.1 և 5.2 տոկոս աճերի հաշվին: Ընթացիկ ծախսերի՝ ճշտված պլանի նկատմամբ 5.4% թերակատարման 2.0 տոկոսային կետը պայմանավորված է «Այլ ծախսերի» (որի բացվածքը չի ներկայացվում հաշվետվությունում) 12.6% թերակատարմամբ, 1.6 տոկոսային կետով «Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում» հոդվածի 11.6% թերակատարմամբ, իսկ 1.4 տոկոսային կետը բացատրվում է սուբսիդիաների 2.6%-ով թերակատարմամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) շարունակվել են թերակատարվել ճշտված պլանի նկատմամբ և, ավելին, նվազել են նախորդ տարվա փաստացի ցուցանիշի համեմատ: Այսպես, կապիտալ ծախսերի փաստացի ծավալը 2022թ. կազմել է 20.0 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 33.2 մլրդ դրամի համեմատ թերակատարվելով 39.9%-ով: Մինևույն ժամանակ, նախնական հաստատված պլանի համեմատ կապիտալ ծախսերը գերակատարվել են 27.1%-ով, քանի որ տարվա ընթացքում կապիտալ ծախսերի ծավալը ճշգրտվել էր դեպի վերև շուրջ 17.5 մլրդ դրամով: Կապիտալ ծախսերի պլանի դեպի վերև ճշգրտումը իրականացվել է «Հիմնական միջոցների» «Մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսված ծախսերի մասով, որը նախապես պլանավորված 3.1 մլրդ դրամից հասցվել է 17.8 մլրդ դրամի, սակայն փաստացի կատարվել է ընդամենը 9.7 մլրդ դրամը: Այս ճշգրտումն իրականացվել է նոր ավտոբուսների ձեռքբերումը կազմակերպելու նպատակով:

Այդուհանդերձ, կապիտալ ծախսերի ծավալը 15.1%-ով նվազել է նախորդ տարվա համեմատ, ինչի արդյունքում նվազել է նաև դրանց տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերում՝ նախորդ տարվա 29.3%-ից հասնելով 21.1%-ի:


Աղյուսակ 3. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ (մլրդ դրամ) և դրանց կատարողականը, 2022թ.

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	Հաստատված պլան	Ճշտված պլան մլրդ դրամ	Փաստ.	Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2021թ. նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	98.8	111.4	94.8	95.9	85.1	18.0
Ընթացիկ ծախսեր	88.1	83.2	78.7	89.3	94.6	4.6
Աշխատանքի վարձատրություն	10.8	10.5	10.4	96.6	98.9	5.2
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	11.5	11.4	10.0	87.6	88.4	32.8
Տոկոսավճարներ	0.0	0.0	0.0	77.8	77.8	195.1
Սուբսիդիաներ	43.7	45.6	44.4	101.6	97.4	5.1
Դրամաշնորհներ	0.5	1.5	1.5	323.0	99.1	179.9
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	0.7	1.2	1.0	134.1	81.8	-11.0
Այլ ծախսեր	21.0	13.0	11.4	54.3	87.4	-18.2
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	15.7	33.2	20.0	127.1	60.1	-15.1
Հիմնական միջոցներ	15.7	33.2	20.0	127.1	60.1	-15.1
Պաշարներ	0.0	0.0	0.0	-	-	-
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-5.0	-5.0	-3.9	77.9	77.9	-78.8

3.2 Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Գործառնական դասակարգմամբ բյուջեի ծախսերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել, թե որ ոլորտներ են ուղղվել Երևան քաղաքի բյուջեի ռեսուրսները: 2022թ. բյուջեի կառուցվածքում, էական տեսակարար կշիռ են ունեցել կրթության ոլորտին և տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը, որոնց ծավալները կազմել են համապատասխանաբար 35.3 և 32.7 մլրդ դրամ, իսկ ընդհանուր ծախսերում կշիռները՝ համապատասխանաբար 37.2% և 34.5%: Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը 2022թ. կազմել են 12.7 մլրդ դրամ՝ լինելով ընդհանուր ծախսերի 13.4%-ը:

Գծապատկեր 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ գործառնական դասակարգմամբ (մլրդ դրամ), 2022թ.



Գործառնական դասակարգման բոլոր հոդվածների գծով արձանագրվել է թերակատարում ճշտված պլանի նկատմամբ: Ընդհանուր ծախսերի 14.9% թերակատարմանն ամենամեծ նպաստումը՝ 8.7 տոկոսային կետով, ունեցել է տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի 22.8% թերակատարումը: Մյուս ոլորտների համար նախատեսված ծախսերի թերակատարումները (սոցիալական ծառայություններ, կրթության ոլորտ, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) նույնպես էական ազդեցություն են ունեցել ընթացիկ ծախսերի թերակատարման վրա:

Աղյուսակ 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ, 2022թ.

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը՝ պլանի նկ., %	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ., %	Աճը՝ 2021թ. նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	98.8	111.4	94.8	95.9	85.1	18.0
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	11.2	11.9	10.6	94.5	88.3	16.3
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	11.0	11.8	10.4	94.3	88.4	15.2
Պաշտպանություն	0.1	0.2	0.1	107.4	83.4	252.6
Տնտեսական ծառայություններ	31.9	42.4	32.7	102.6	77.2	47.6
Տնտեսական հարաբերություններ)	17.8	28.9	20.0	112.8	69.2	70.0
Շրջակա միջավայրի պաշտպանություն	14.1	13.4	12.7	89.9	94.4	22.1
Սոցիալական ծառայություններ	15.4	16.2	12.7	82.8	78.8	28.3
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	8.4	8.3	6.4	76.1	77.3	31.9
Առողջապահություն	0.8	0.8	0.4	51.4	50.5	22.4
Հանգիստ, մշակույթ և կրոն	4.4	5.5	4.6	106.2	84.7	30.0
Սոցիալական պաշտպանություն	1.9	1.6	1.3	71.0	79.8	9.0
Կրթություն	34.8	36.9	35.3	101.4	95.6	11.9
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	5.6	4.0	3.5	62.5	87.3	-54.2

Նախորդ տարվա համեմատ բյուջեի ծախսերի 18.0% աճին առավելապես նպաստել է տնտեսական ծառայություններին (հիմնականում՝ հարաբերություններին) ուղղվող ծախսերի 47.6% աճը, որի նպաստումը կազմել է 13.1 տոկոսային կետ: Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը աճել են 28.3%-ով և ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 3.5 տոկոսային կետով: Դրանց կազմում հիմնականում աճել են բնակարանային շինարարությանը և կոմունալ ծառայություններին ուղղվող

ծախսերը: Էական է եղել նաև կրթության ոլորտին ուղղվող ծախսերի աճը, որն ընդհանուր ծախսերի աճին նպաստել է 4.7 տոկոսային կետով:

3.3 Ծախսերը՝ ըստ ծրագրերի

Թեև Երևանի բյուջեի կատարողականը որոշակիորեն բարելավվել է նախորդ տարվա համեմատ, սակայն դեռևս առկա են զգալի թերակատարումներ որոշ կարևոր ծրագրերի գծով: Վերլուծության այս բաժնում առանձնացվել են բյուջեի այն ծախսային ծրագրերը, որոնք կարևոր նշանակություն ունեն Երևանի քաղաքային ենթակառուցվածքների բարելավման և զարգացման տեսանկյունից, և փորձ է արվել ուսումնասիրել դրանց կատարողականները:

Աղյուսակ 5-ից պարզ է դառնում, որ բավական ցածր կատարողականներ են գրանցվել այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են նախագծային աշխատանքների իրականացումը (որոնք անհրաժեշտ են հաջորդ տարիներին կապիտալ ծախսերի պատշաճ մակարդակի իրականացման համար), ոռոգման ցանցի կառուցումը և վերանորոգումը, ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգումը, փողոցների, հրապարակների և այգիների կահավորումը, զբոսաշրջության զարգացումը, բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգումը և պահպանումը, նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգումը և վերանորոգումը:

Աղյուսակ 5. Երևան քաղաքի 2022թ. բյուջեի մի շարք կարևոր ծրագրերի կատարողական ցուցանիշները, մլն դրամ

Ծրագիրը	Հաստատված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ, %
Նախագծային աշխատանքներ	886.3	683.9	77.2
Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում	201.6	130.3	64.6
Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	3,205.30	3,115.90	97.2
Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում	150.00	98.90	65.9
Եզրաքարերի վերանորոգում	239.32	194.43	81.2
Հենապատերի վերանորոգում	138.91	81.06	58.4
Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում	301.03	234.34	77.8
Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում	150.00	77.63	51.8
Փողոցների պահպանում և շահագործում	96.03	87.66	91.3

Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում	535.01	290.37	54.3
Տրանսպորտային համակարգի արդիականացում	9,045.64	2,614.75	28.9
Վերելակների հիմնանորոգում	4,787.02	4,749.81	99.2
Զբոսաշրջության զարգացում	31.30	4.36	13.9
Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում	770.90	707.73	91.8
Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում	2,463.13	1,633.00	66.3
Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում	3,148.87	2,642.33	83.9


4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ

2022թ. Երևան քաղաքի բյուջեն եղել է պակասուրդային, որը կազմել է 8.6 մլրդ դրամ: Տարեսկզբին նույնպես նախատեսվել էր ունենալ պակասուրդային բյուջե, սակայն ոչ թե 8.6, այլ 4.3 մլրդ դրամով պակասուրդով: Տարվա ընթացքում, սակայն, հաստատված պլանը ճշգրտվել է, և պակասուրդի չափը հասցվել է 24.0 մլրդ դրամի՝ հիմնականում ֆոնդային բյուջեի (որը նախատեսված է կապիտալ ծախսերի իրականացման համար) պլանավորվող պակասուրդի մեծացման հաշվին: Արդյունքում, ֆոնդային բյուջեի պակասուրդը կազմել է 14.7 մլրդ դրամ՝ ճշտված ծրագրով նախատեսված կապիտալ ծախսերի թերակատարման հետևանքով, իսկ վարչական բյուջեն կատարվել է 6.1 մլրդ դրամ հավելուրդով (ընթացիկ ծախսերի թերակատարման հետևանքով):

Նախորդ տարվա բյուջեն կատարվել էր 1.4 մլրդ դրամ հավելուրդով՝ այդ տարվա ճշտված պլանով նախատեսված 23.8 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Հետևաբար, 2022թ. մի կողմից՝ բարելավվել է պակասուրդի կատարողականը, մյուս կողմից՝ նախորդ տարվա համեմատ վատթարացել է բյուջեի հաշվեկշիռը:

2022թ. բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին, մասնավորապես՝ տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման միջոցով: Ճշտված պլանով նախատեսված է եղել նաև արտաքին աղբյուրներից վարկերի և փոխատվությունների ստացում շուրջ 1.5 մլրդ դրամի չափով, սակայն փաստացի ստացվել է ընդամենը 0.6 մլրդ դրամ:

Գծապատկեր 5. Երևան քաղաքի բյուջեի հավելուրդը (պակասուրդը) (մլրդ դրամ), 2022թ.



5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով Երևան քաղաքի 2022թ. բյուջեի կատարողականի վերաբերյալ վերլուծությունը՝ արձանագրենք հետևյալը.

- Երևան քաղաքի բյուջեի պլանավորման և իրականացման գործընթացները շարունակում են էականորեն շեղված մնալ:** Իհարկե, կատարողականի որոշակի բարելավում արձանագրվել է նախորդ տարվա համեմատ, սակայն ինչպես բյուջեի եկամուտների, այնպես էլ ծախսերի գծով արձանագրված թերակատարումները բավական մեծ են, ինչի արդյունքում քաղաքային բյուջեի առջև դրված խնդիրներն ամբողջությամբ և արդյունավետ կերպով չեն իրականացվում: Հետևաբար, համայնքային իշխանությունները պետք է իրականացնեն հստակ քայլեր՝ բյուջեի պլանավորման և կատարման փուլերը համապատասխանեցնելու համար:
- Երևան քաղաքի բյուջեի եկամուտների աճը 2022 թվականին նախորդ տարվա համեմատ բավական ցածր է եղել:** Եթե հաշվի առնենք այն, որ 2022թ. միջին գնաճը կազմել է 8.6%, ապա կարող ենք նշել, որ բյուջեի եկամուտների 5.5 % աճը բավարար չէ քաղաքի հիմնական խնդիրների լուծման գործընթացում էական առաջընթաց գրանցելու համար: Քանի որ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում չկան տնտեսական իրավիճակի հետ կապված եկամտատեսակներ, այդ պատճառով բարձր տնտեսական աճը չի արտացոլվում բյուջեի եկամուտների վրա: Այնուամենայնիվ, եթե ապահովվեր

բյուջեի եկամուտների պատշաճ հավաքագրումը, ապա բյուջեի եկամուտների աճն առավել ընդունելի մակարդակում կլինեն: Օրինակ, եթե գույքահարկի կատարողականը լիներ 100%, ապա ընդհանուր եկամուտների աճը կկազմեր 9.1%՝ գերազանցելով գնաճի տեմպը: Այս իրավիճակը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է համայնքների եկամուտների կազմում ավելացնել տնտեսական իրավիճակի հետ կապված եկամտատեսակներ (օրինակ՝ եկամտային հարկի կամ ԱԱՀ-ի որոշակի մասնաբաժին), ինչը մի կողմից՝ հնարավորություն կտա համայնքներին օգտվել բարձր տնտեսական աճի դրական արդյունքներից, մյուս կողմից՝ խթաններ կստեղծի համայնքային իշխանությունների կողմից տնտեսական ակտիվությանը նպաստող միջոցառումների իրականացման համար:

- **Երևան քաղաքի 2022թ. բյուջեի ծախսերի փաստացի ցուցանիշը կազմել է 94.8 մլրդ դրամ, ինչի պայմաններում բյուջեի հաստատված պլանի նկատմամբ թերակատարումը կազմել է 4.1%, իսկ ճշտված պլանի նկատմամբ՝ 14.9%:** Ճշտված պլանի նկատմամբ թերակատարման չափը հաճախ առավել կարևոր ցուցանիշ է համարվում, քանի որ ճշտված պլանը ցույց է տալիս, թե որքան ծախս էր անհրաժեշտ տարվա ընթացքում համայնքային իշխանությունների դիմաց դրված խնդիրները լուծելու համար: Հետևաբար, դրանց թերակատարումը նշանակում է, որ մշակված միջոցառումներն ամբողջությամբ չեն իրականացվել, և անհրաժեշտ արդյունքներն ամբողջությամբ չեն ստացվել:
- **Շարունակվում են պահպանվել կապիտալ ծախսերի իրականացման խնդիրները:** 2022թ. կապիտալ ծախսերը ոչ միայն թերակատարվել են, այլ նաև նվազել են նախորդ տարվա համեմատ: Կապիտալ ծախսերի թերակատարումները հաճախ բացատրվում են կարողությունների անբավարար մակարդակով: Սակայն, եթե ծախսերի ծավալն ավելի փոքր է, քան նախորդ տարվա փաստացի մակարդակը, ապա ստացվում է, որ կա՛մ կարողություններն էլ ավելի են նվազել, կա՛մ առկա են այլ խնդիրներ, որոնք սահմանափակում են կապիտալ ծախսերի իրականացումը: Այս մասով, քաղաքային իշխանությունները պարտավոր են իրականացնել ուսումնասիրություններ թերակատարումների իրական պատճառները բացահայտելու նպատակով:
- **Թերակատարված կապիտալ ծախսերի շարքում առկա են քաղաքային ենթակառուցվածքների բարելավման և զարգացման տեսանկյունից բավական կարևոր ծրագրեր:** Օրինակ, զգալի թերակատարումներ են արձանագրվել այնպիսի ծրագրերի գծով, ինչպիսիք են նախագծային

աշխատանքների իրականացումը (որոնք անհրաժեշտ են հաջորդ տարիներին կապիտալ ծախսերի պատշաճ մակարդակի իրականացման համար), ոռոգման ցանցի կառուցումը և վերանորոգումը, ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգումը, փողոցների, հրապարակների և այգիների կահավորումը և այլն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: